ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական վերաքննիչ
դատարանի որոշում
Վարչական գործ թիվ ՎԴ/7373/05/13
Նախագահող դատավոր՝ Ք. Մկոյան
Դատավորներ՝ Ա. Առաքելյան
Գ. Ղարիբյան

Վարչական գործ թիվ ՎԴ/7373/05/13
2014թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎՃՌԱԲԵԿ ԲՈՂՈՔԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

<<27>> օգոստոսի 2014թ. ք. Երևան

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան),

նախագահությամբ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

քննարկելով ըստ հայցի Մուայադ Ռաֆիկի Աբբասի ընդդեմ ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայության (այսուհետ՝ Ծառայություն)՝ 12.07.2013 թվականի թիվ Դ-17/13-Ա որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, վարչական գործով ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 08.07.2014 թվականի որոշման դեմ Մուայադ Աբբասի և նրա ներկայացուցիչ Սուրեն Բաղրամյանի բերած վճռաբեկ բողոքը քննության ընդունելու հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Մուայադ Ռաֆիկի Աբբասը պահանջել է անվավեր ճանաչել Ծառայության 12.07.2013 թվականի թիվ Դ-17/13-Ա որոշումը:

ՀՀ վարչական դատարանի (այսուհետ՝ Դատարան) 14.03.2014 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 08.07.2014 թվականի որոշմամբ Մուայադ Ռաֆիկի Աբբասի վերաքննիչ բողոքը մերժվել է և Դատարանի 14.03.2014 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք են ներկայացրել Մուայադ Ռաֆիկի Աբբասը և նրա ներկայացուցիչը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճռաբեկ բողոքը բերվել է նյութական և դատավարական իրավունքի խախտումների, ինչպես նաև օրենքի միատեսակ կիրառությունն ապահովելու հիմքերով:

Բողոքում պատճառաբանվել է, որ Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի 2-րդ պարբերությունը, <<Փախստականների կարգավիճակի մասին>> կոնվենցիայի 33-րդ հոդվածը, <<Փախստականների և ապաստանի մասին>> ՀՀ օրենքի 2-րդ հոդվածը, 10-րդ հոդվածի 3-րդ մասը, 52-րդ հոդվածի 1-3-րդ մասերը, <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասը, 37-րդ հոդվածը, 63-րդ հոդվածի 1-ին մասը, չի կիրառել <<Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին>> եվրոպական կոնվենցիայի 15-րդ հոդվածի 1-ին կետը, <<Պայմանագրերի իրավունքի մասին>> Վիեննայի կոնվենցիան, <<Փախստականների կարգավիճակի մասին>> կոնվենցիայի 33-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերը, 42-րդ հոդվածի 1-ին կետը, <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 4-րդ, 6-րդ, 8-րդ, 21-րդ, 37-րդ, 38-րդ, 55-րդ, 57-րդ հոդվածները, <<Փախստականների և ապաստանի մասին>> ՀՀ օրենքի 5-րդ, 6-րդ, 9-րդ, 11-րդ, 45-րդ, 49-րդ, 51-53-րդ, 56-րդ հոդվածները, <<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 5-րդ, 43-րդ հոդվածները, որոնք պետք է կիրառեր, խախտել է ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 1-ին մասը:

Բողոք բերած անձը նշված հիմնավորումները պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է այն, որ վիճելի վարչական ակտի ընդունմանն ուղղված վարչական վարույթը չի համապատասխանում ՀՀ օրենսդրության պահանջներին, քանի որ Ծառայությունը չի իրականացրել չի բացահայտել գործի բոլոր, այդ թվում՝ Մուայադ Աբբասի օգտին առկա փաստական հանգամանքները, չի պարզել Մուայադ Աբբասի՝ ՀՀ ազգային անվտանգության համար վտանգավոր լինելու հիմնավոր պատճառների առկայությունը: Ծառայությունը Մուայադ Աբբասին չի ներգրավել վիճելի վարչական ակտի ընդունմանն ուղղված վարչական վարույթին, չի անցկացրել հարցազրույց նրա հետ, չի ընձեռել նրան քննարկվող հարցի շուրջ իր դիրքորոշումն արտահայտելու, ապացույցներ ներկայացնելու և վարչական վարույթի ընթացքում իր մյուս իրավունքներից օգտվելու հնարավորություն:

Վերաքննիչ դատարանը չի անդրադարձել այն հարցին, որ համաձայն <<Փախստականների կարգավիճակի մասին>> կոնվենցիայով և <<Փախստականների և ապաստանի մասին>> ՀՀ օրենքով սահմանված չվերադարձվելիության սկզբունքի՝ Մուայադ Աբբասը չէր կարող զրկվել փախստականի կարգավիճակից:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել նաև այն, որ ՀՀ ազգային անվտանգության ծառայության 30.05.2013 թվականի թիվ 2/2/3-714 գրությունը չի կարող հանդիսանալ Մուայադ Աբբասի՝ ՀՀ ազգային անվտանգության համար վտանգավոր լինելու հուսալի, արժանահավատ և վերաբերելի ապացույց, քանի որ այն հիմնված է ենթադրությունների վրա: Ավելին, նշված գրությունը համարվում է գաղտնի ապացույց, որը վիճարկելու հնարավորություն Մուայադ Աբբասը չունի և չի ունեցել, ինչի արդյունքում խախտվել են արդարության և բնական արդարադատության սկզբունքները: Ասվածի հիմնավորումը մանրամասն կերպով արձանագրված է Չահալն ընդդեմ Միացյալ Թագավորության գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 25.10.1996 թվականի վճռով:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ ՄԱԿ ՓԳՀ-ի չվերադարձվելիության սկզբունքի սահմափակումների վերաբերյալ հայտնել է այն դիրքորոշումը, որ մարդու իրավունքների միջազգային պաշտպանությունից ցանկացած սահմանափակում պետք է

մեկնաբանել և կիրառել դրա սահմանափակ իմաստով՝ մարդու իրավունքների սահմանափակման բացառությունների ընդհանուր սկզբունքներին համապատասխան:

Միաժամանակ Վերաքննիչ դատարանը <<չի կիրառել <<Փախստականների կարգավիճակի մասին>> կոնվենցիայի ծանոթագրություն 1-ինը, 33-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերը, 42-րդ հոդվածի 1-ին կետը, <<Փախստականների կարգավիճակի մասին>> կոնվենցիայի մեկնաբանությունը, 12.08.1949 թվականի Ժնևի կոնվենցիաները և միջազգային զինված հակամարտությունների զոհերի պաշտպանության վերաբերյալ լրացուցիչ արձանագրությունը, ՄԱԿ-ի ՓԳՀ-ի Գործադիր կոմիտեի թիվ 6 եզրակացությունը, ՄԱԿ-ի ՓԳՀ-ի 16.12.1998 թվականի փախստականի կարգավիճակի տրամադրման դիմումի ապացուցման բեռի և ստանդարտի վերաբերյալ բացատրական գրությունը>>:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանի որոշումը հակասում է թիվ ՎԴ/0016/05/08 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 26.12.2008 թվականի որոշմանը և Չահալն ընդդեմ Միացյալ Թագավորության գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 25.10.1996 թվականի վճռին:

Բողոք բերած անձինք պահանջել են բեկանել Վերաքննիչ դատարանի 08.07.2014 թվականի որոշումը և փոփոխել այն՝ հայցը մերժել:

<u>3. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը</u>

Վճռաբեկ դատարանը, քննարկելով բողոք բերած անձանց հիմնավորումները՝ վճռաբեկ բողոքը քննության ընդունելու մասին, գտնում է, որ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը ենթակա է մերժման հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 162-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժվում է, եթե բացակայում են նույն օրենսգրքի 160-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված հիմքերը: Նույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժվում է, եթե բացակայում են նույն օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքերը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վճռաբեկ բողոքն ընդունվում է քննության, եթե վճռաբեկ դատարանը հանգում է այն հետևության, որ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, կամ առերևույթ թույլ է տրվել դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, կամ առկա է նոր կամ նոր երևան եկած հանգամանք:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 158-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ վճռաբեկ բողոքը նույն օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով բերելու դեպքում վճռաբեկ բողոք բերող անձը վճռաբեկ բողոքում նշում է այն նյութական կամ դատավարական նորմը, որը խախտվել է՝ հիմնավորելով, որ այդ խախտումն ազդել է գործի ելքի վրա: Մինչդեռ սույն գործով բողոք բերած անձանց ներկայացրած փաստարկները բավարար չեն դատական սխալի առկայությունը և գործի ելքի վրա դրա ազդեցությունը հիմնավորված համարելու համար:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, մասնավորապես, եթե տարբեր գործերով ստորադաս դատարանների առնվազն երկու դատական ակտերում միևնույն նորմը կիրառվել է հակասական մեկնաբանությամբ, բողոքարկվող դատական ակտում որևէ նորմի մեկնաբանությունը հակասում է սահմանադրական դատարանի որոշման եզրափակիչ մասում բացահայտված՝ տվյալ նորմի սահմանադրաիրավական բովանդակությանը, բողոքարկվող դատական ակտում որևէ նորմի մեկնաբանությունը հակասում է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշման մեջ տվյալ նորմին

տրված մեկնաբանությանը, բողոքարկվող դատական ակտում որևէ նորմի մեկնաբանությունը հակասում է վճռաբեկ դատարանի որոշման մեջ տվյալ նորմին տրված մեկնաբանությանը, վճռաբեկ դատարանը համարում է, որ բողոքարկվող դատական ակտի կապակցությամբ առկա է իրավունքի զարգացման խնդիր:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ թեև բողոք բերած անձինք վճռաբեկ բողոքում վկայակոչել են թիվ ՎԴ/0016/05/08 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 26.12.2008 թվականի որոշումը և Չահալն ընդդեմ Միացյալ Թագավորության գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 25.10.1996 թվականի վճիռը, սակայն բավարար չեն հիմնավորել, թե սույն գործով Վերաքննիչ դատարանի որոշումն ինչով է հակասում բողոքում նշված որոշումներին: Հետևաբար բերված բողոքում ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքը ևս հիմնավորված չէ:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բողոքում ներկայացված հիմնավորումները բավարար չեն ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված հիմքերով բողոքը քննության ընդունելու հետևության հանգելու համար: Հետևաբար ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 162-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը ենթակա է մերժման:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ, 162-րդ և 172-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Թիվ ՎԴ/7373/05/13 վարչական գործով ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 08.07.2014 թվականի որոշման դեմ Մուայադ Ռաֆիկի Աբբասի և նրա ներկայացուցչի բերած վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժել:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

Նախագահող՝ _____ *Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ*

Դատավորներ՝ _____ *Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ*

_____ *Վ. ԱԲԵԼՅԱՆ*

_____ *Մ. ԱՆՏՈՆՅԱՆ*

_____ *Գ. ՀԱԿՈԲՅԱՆ*

_____ *Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ*